

ՔԻՒՐԳԵՐՈՒ ԴԺԲԱՍՈՒԹԵԱՆ
ԵՒ ԲԱՍՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՆՈՆՑ ՎԵՀԱՆՁՆՈՒԹԵԱՆ
ՈՒ ԱՆՀԱՄԵՐԱՇՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սաքի (մատրակ), ի սէր Աստուծոյ, շնորհ ը-
րէ,
Մեր բաժակին մէջ ալ լեցուր ումպ մը գինի:
Թող աշխարհը արտացոլայ այդ գինիի քաժա-
կին մէջ,
Որպէսզի մեր ֆակատագիրն ալ երեւայ հոն,
Որպէսզի մեր գալիք վիճակը պայծառ երե-
ւայ:
Ե՞րբ բախտը մեզի պիտի ժպտի.
Մեր դժբախտութիւնը գագաթնակէտին հա-
սած է,
Մի՞թէ անոր անկումը մօտալուտ չէ:
Անուագն կայ հաւասարութեան սահմանագիծ
մը, (դժբախտութեան եւ բարեբախտութեան
միջեւ,
Մինչեւ որ դժբախտութեան ժամը հասնի,
Եթէ կարելի է այդ անիւին վրայ դարձիր,
Որպէսզի բախտը մեր աստղն ալ տեսնէ,
Արքննայ իր բունէն, գոնէ անգամ մը,
Մեզմէ ալ դուրս գայ աշխարհակալ մը,
Ու մեր բախտն ալ դառնայ մեզի սիրահար:
Մեզմէ ալ նարուի թագաւոր մը,
Մեր հնարագիտութիւնը երեւան հանուի,
Մեր գրողներուն արժէքները գիտցուին,

պօէմը կազմուած էր ժողովրդակա՞ն բանա-
հիւսութեամբ, իր յաւելումներով եւ կրճա-
տումներով, թէ՛ կը պատկանէր մէկ հեղինա-
կի:

Հիմա, բարերախտարար, իմ տրամադրու-
թեան տակ ունիմ «Մամ ու Զին»ի մէկ ձեռա-
գիրը, քիւրդերէն լեզուով՝ արաբերէն տառե-
րով: Ինծի կը թուի որ այս ձեռագիրն է ամե-
նէն հինը եւ թերեւս միակը, որ այսօր դոյու-
թիւն ունի: «Մամ ու Զին»ի հեղինակն է Ահ-
մէտ Հանի, որ հեղինակած է իր երկը 1645-ին:
Իր գիրքը ընդօրինակուած է 104 տարի յետոյ,
այսինքն՝ 1749-ին: Գրչագիրն է Ազիզ Շիրբար:

Ահա այս ձեռագրի մէջն է ամփոփուած
«Մամ ու Զին»ը ամբողջութեամբ, եւ սկիզբը
գրուած են նոյն բանաստեղծէն երեք երգեր,

Մեր գիտութիւնը ծաղկի,
Որպէսզի կրնան գտնել մեր վիշտերուն դեղ մը:
Եթէ ունենայինք ազատ ու անկաշկանդ մարդ
մը,

Վեհանձն ու ազդեցիկ խօսքի տէր,
Մեր արծաթը պիտի ըլլար կոխուած դրամ,
Եւ անարժէք ու կասկածելի պիտի չմնար:
Արծաթը որքան ալ մաքուր ու գուտ ըլլայ,
Միայն դրամ դառնալով կ'ազնուանայ:
Եթէ ունենայինք թագաւոր մը, գոր Աստուած
արժանի նկատէր թագի մը,

Եթէ որոշուէր անոր գահ մը,
Այն ատեն մեզի բախտ մը պիտի բացուէր,
Մենք կտոր կտոր պիտի չըլլայինք վատօրէն,
Եւ անկասկած պիտի բարգաւաճէինք:

Մեր վրայ այդ թուրքերը յաղթական պիտի
չըլլային,
Մեր հայրենիքը աւերակ մը պիտի չդառնար
այդ բուերուն ձեռքը,
Այդ նորեկներուն ստրկանալու պիտի չստիպ-
ուէինք՝

Թուրքին ու տանիկին հպատակ ու յաղթուած:
Բայց հինէն Աստուած այդպէս ըրաւ,
Այդ թուրքն ու Ֆարսը մեր վրայ բերաւ:
Անոնց հպատակութիւնը, միշտ է, ամօթալի է,
Այդ ամօթը, սակայն, անուանի մարդոցն է,
Անպատուութիւնը իշխաններուն եւ տիրողնե-
րուն է,

որոնք տեսակ մը յառաջարան կը կազմեն զըր-
քին:

Այդ յառաջարան-ոտանաւորներէն երկու-
քը զըրքի իմաստին բանաստեղծական արժէքին
եւ քիւրդ բանաստեղծութեան շուրջ կը դառ-
նան, խիստ դեղեցիկ ոճով մը կառուցուած:
Սակայն մէկը այդ յառաջարաններէն կը շօ-
չափէ քիւրդ ազատագրական շարժումը եւ շա-
հեկան է տեսնել թէ Ահմէտ Հանին, (իմ կար-
ծիքով քիւրդ մեծ բանաստեղծը) սակէ մօտ
երեք հարիւր տարի առաջ, ի՞նչ կը մտածէր
քիւրդերու ազատագրութեան մասին:

Ոտանաւորը որ գրուած է ընտիր ոճով եւ
կատարեալ տաղաչափութեամբ մը, կը ներ-
կայացնեմ ազատ ու բառացի թարգմանու-
թեամբ, որպէսզի իմաստը չտուժէ: Կ. Ս.